

**Ընտանեկան բռնության հարաբերություններում
երեխաների իրավունքների պաշտպանության
պրակտիկան համավարակի
ժամանակահատվածում**

Հետազոտության հեղինակ՝ Նոնա Գալստյան

Երևան 2021

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Հետազոտության մեջ տեղ գտած վերլուծությունները և եզրահանգումներն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դիրքորոշումների և տեսակետների հետ:

Բովանդակություն

Ներածություն.....	4
Ներկա իրավիճակը Հայաստանում.....	6
Հետազոտության նպատակը և խնդիրները.....	9
Մեթոդաբանություն	9
1. Կովիդ-19 համավարակի ազդեցությունը ընտանեկան բնության կանխարգելման - տեղեկացման միջոցառումների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում.....	11
1.1. Կանխարգելիչ իրազեկման միջոցառումների կիրառման պրակտիկան Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում.....	13
1.2. Տեղեկացման (ուղղորդման) ծառայության պրակտիկան Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում	16
2. Համավարակի ժամանակահատվածում ընտանեկան բնության դեպքերով կանխարգելիչ հաշվառման ենթարկելու և մշտադիտարկում (հսկողություն) իրականացնելու գործառույթները Հայաստանի Հանրապետությունում	21
2.1. Կանխարգելիչ հաշվառման համակարգի կիրառումը Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում.....	21
2.2. Ընտանեկան բնությունից երեխայի պաշտպանությունը մշտադիտարկում (հսկողություն) իրականացնելու գործողությունների տիրույթում Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում.....	23
Եզրահանգումներ և առաջարկություններ	26
Օգտագործված աղբյուրները	28

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին աշխարհում տարածվեց նոր հիվանդություն՝ Կովիդ-19-ը, որը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հայտարարվեց գլոբալ համավարակ (պանդեմիա)¹: Համավարակի ներթափանցումը կանխելու և տարածումը նվազեցնելու նպատակով պետության կողմից գործարկվեցին մի շարք սահմանափակումներ, ընդհուպ համընդհանուր բնույթ ունեցող (լոքդաուն)², որոնց արդյունքում կաթվածահար եղավ պետական կառավարման ինստիտուտների մեծ մասի աշխատանքը:

Համավարակի բացասական ազդեցությունն ակնառու էր հատկապես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Մասնավորապես, խոցելի խմբերի, տվյալ դեպքում, երեխաների իրավունքների և օրինական շահերի գործնականում պաշտպանությունն արձանագրեց այլընտրանքային գործիքակազմերի անհրաժեշտություն՝ պայմանավորված կանխարգելիչ-աջակցության ծառայությունների դժվար հասանելիությամբ, իրավապահ մարմինների գործունեության բնականոն ապահովման խոչընդոտներով:

Առանձնակի կարևորվեցին ընտանեկան բնության հարաբերություններին մասնակից երեխաներին համարժեք պաշտպանություն տրամադրելու, բնության մասին տեղեկությունը հրատապ հաղորդելու, շահառու երեխայի կարիքները հաշվառելու ընթացակարգերի կիրարկման խնդիրները:

Համավարակի արդյունքում հայտարարված արտակարգ դրության ռեժիմն ինքնատիպ ազդակ հանդիսացավ երեխաների առաջնային շահերին համահունչ պրակտիկ, համակարգային լուծումներ փնտրելու համար:

¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://time.com/5791661/who-coronavirus-pandemic-declaration> :

² ՀՀ կառավարության 16 մարտի 2020թ. թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ից մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը հայտարարվեց արտակարգ դրություն: Հետագայում արտակարգ դրության ժամկետի երկարաձգման (ընդհուպ մինչև 2020թվականի սեպտեմբեր ամիսը) և կիրառվող սահմանափակումների փոփոխման վերաբերյալ ՀՀ կառավարությունն ընդունեց մի քանի որոշումներ (13.04.20թ. թիվ 543-Ն, 14.05.20թ. թիվ 729-Ն, 12.06.20թ. թիվ 933-Ն, 13.07.2020թ. թիվ 1161-Ն, 12.08.20թ. թիվ 1319-Ն):

Հասանելի են հետևյալ հղումներով՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140975>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141255>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142401>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143299>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=144373>

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145244>:

Հետազոտության առարկա հարցադրումների միջոցով նպատակ է դրվել ուսումնասիրելու և բացահայտելու համավարակով պայմանավորված պետության արձագանքը և ձեռնարկված հակազդման միջոցառումների շրջանակը (այդպիսիք ընդունված լինելու պարագայում) ընտանեկան բռնությունից երեխայի իրավական պաշտպանվածության հարցին՝ ընթացք վերլուծության ենթարկելով ներպետական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի ուղղակի ազդեցությունն արձանագրված խնդիրներին:

Լիահույս ենք, որ բարձրացված հարցերով առաջարկվող մոտեցումները կիրառելի կլինեն նաև համավարակի նահանջից հետո, այդ թվում՝ արտակարգ դրության յուրաքանչյուր այլ վիճակում, ընտանեկան բռնության ծառայությունների շարունակական և պատշաճ հասանելիություն ապահովելու համար:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեխայի իրավունքների պաշտպանությունը և լավագույն շահերի ներկայացված լինելը յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Երեխայի նկատմամբ բռնությունը որպես անթույլատրելի, հակաիրավական վարքագիծ (գործողություն) ամրագրվել է երեխայի կարգավիճակին վերաբերող մի շարք միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում («Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան³, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան⁴, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից 20.11.1959թվականին ընդունված «Երեխայի իրավունքների հռչակագիրը»⁵, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը, «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը⁶ և այլն:

Թեև օրենսդրական մակարդակում Հայաստանը նախանշել է երեխայի հիմնարար իրավունքների և լավագույն շահերի շրջանակը, ինչպես նաև ընդունել է ընտանեկան բռնությունից անձին պաշտպանելու իրավական ընթացակարգեր, սակայն գործող կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը հուշում է՝ առավելապես երեխաների մասով ոլորտն ունի բարեփոխումների կարիք:

Ուշագրավ է, որ Հայաստանում պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում երեխաների ընտանեկան բռնության դեպքերի իրական թիվը, քանի որ մի կողմից, երեխայի նկատմամբ բռնության դրսևորումներին հատուկ է առավել բարձր լատենտայնությունը/քողարկված լինելը, մյուս կողմից էլ՝ բռնությունից անուղղակի տուժած, բռնությանն ակնատես երեխաները չեն հաշվառվում որպես բռնության ենթարկված երեխա և դուրս են մնում դեպքերի վիճակագրությունից:

Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման

³ Ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) գլխավոր ասամբլեայի 44/25 բանաձևով, 1989թ. նոյեմբերի 20-ին: 1992թ.-ին Հայաստանի Հանրապետությունը Գերագույն խորհրդի որոշմամբ միացել է Կոնվենցիային, Կոնվենցիան Հայաստանի համար ուժի մեջ է մտել 22.07.1993թ.-ին, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503>:

⁴ Ստորագրվել է 2007թ. հոկտեմբերի 25-ին Լանգարտում, Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Կոնվենցիան 2010 թվականի սեպտեմբերի 29-ին, վավերացրել է 11.05.2020թ. թիվ ՀՕ-275-Ն օրենքով:

⁵ Հասանելի է հետևյալ հղումով, ռուսերեն լեզվով՝ https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/childdec.shtml :

⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115> :

մասին» ՀՀ օրենքն է⁷, որն առաջարկում է կարճաժամկետ և երկարաժամկետ միջամտության գործիքներ հետևյալ նպատակներին հասնելու համար՝

- ✓ կանխարգելել հետագա բռնության գործադրումը,
- ✓ պաշտպանել բռնության ենթարկված անձին,
- ✓ բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառել սահմանափակող միջոցներ,
- ✓ ձևավորել համագործակցություն շահագրգիռ պետական մարմինների, ոչ պետական, մասնավոր հատվածի կազմակերպությունների միջև:

Ամենին չանտեսելով Օրենքի կարճատև կիրառման պրակտիկան⁸՝ վստահորեն հնարավոր է արձանագրել, որ խիստ թերի և նվազ է ապահովվում ընտանեկան բռնությունից տուժած երեխայի պաշտպանությունը, երեխան հաճախ բխվում է կրկնակի զոհացման իրական ռիսկերի հետ: Մասնավորապես, բռնությանն ակնատես, բռնության միջավայրում գտնվող երեխան չի ճանաչվում բռնությունից տուժած, հետևապես, դուրս է մնում պետության հոգածությունից, չեն գործում երեխայի հանդեպ բռնության դեպքի մասին տեղեկությունն օպերատիվ հաղորդելու, բռնության միջավայրից երեխային անհապաղ հեռացնելու, երեխայի ընտանեկան բռնության դեպքերով ընտանիքի անդամի իրավունքների սահմանափակում կիրառելու առանձին ընթացակարգեր և այլն:

Միևնույն ժամանակ, համավարակի դեմ ուղղված միջոցառումները (սոցիալական հեռավորության պահպանում, ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում, բնակության/գտնվելու վայրում ինքնամեկուսացում, պետական մարմինների աշխատանքի դադարեցում կամ որոշ դեպքերում՝ անցում հեռավար աշխատանքին) զրկեցին երեխային հրատապ օգնություն և աջակցություն ստանալու, բռնության շարունակական ազդեցությունից պաշտպանվելու իրավունքից:

Արտակարգ դրության սահմանափակումներին անմիջապես հաջորդեց Հայաստանում ռազմական դրության հաստատումը⁹, որի ընթացքում պետության

⁷ Այսուհետ՝ Ընտանեկան բռնության մասին օրենք կամ Օրենք, ընդունվել է 2017թ. դեկտեմբերի 13-ին, ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 31-ից: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=118672> :

⁸ Համաձայն Օրենքի անցումային և եզրափակիչ դրույթների (հոդված 23)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար պաշտպանության միջոցները սկսել են գործել 2018թ. հունիսի 31-ից, իսկ աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայությունները հասանելի են դարձել Օրենքի պաշտոնական հրապարակումից մեկ տարի անց:

⁹ ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն՝ պայմանավորված Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի Հանրապետության կողմից սկսված ռազմական գործողություններով: Ռազմական դրությունը վերացվեց ՀՀ ազգային ժողովի 24.03.2021թ. թիվ ԱԺՌ-001-Ն որոշմամբ:

առջև ծառացան լրջագույն անվտանգային, սոցիալ-տնտեսական և պետական համակարգի կառավարման ճգնաժամի մարտահրավերներ: Պետությունն ամբողջությամբ իր նյութական, մարդկային և կազմակերպչատեխնիկական ռեսուրսներն ուղղեց պատերազմով թելադրված կարիքների բավարարմանը: Արդյունքում, դեռևս արտակարգ դրության ռեժիմում արձանագրված երեխաների՝ ընտանեկան բռնության ոլորտի խնդիրները և բացթողումները մնացին առկախված, առանց համարժեք լուծումների:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել համավարակի պայմաններում ընտանեկան բռնության հարաբերություններում երեխայի իրավունքների և առաջնային շահերի պաշտպանության հիմնահարցերը՝ հետևյալ շեշտադրումների ներկայացմամբ՝

1) մինչդատական գործընթացներում երեխայի իրավական պաշտպանության համակարգը, ընտանեկան բռնության դեմ պայքարի գործողությունների պրակտիկան համավարակից առաջ և դրա ընթացքում,

2) ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների պրակտիկան համավարակից առաջ և դրա ընթացքում,

Նկատառում: Ընտանեկան բռնության մասին օրենքը երեխայի ընտանեկան բռնության դեպքերը ներառում է բռնության ընդհանուր դեպքերի կազմում: Այսինքն՝ անկախ բռնության հարաբերությունների սուբյեկտային կազմից, բռնության ենթարկված անձինք ստանում են միևնույն աջակցությունը: Նշվածի պատճառով էլ սույն հետազոտությամբ քննարկվող հարցերի շրջանակում ներկայացվել են այն իրավանորմերը, որոնք իրենց բնույթով և կարգավորման տրամաբանությամբ կիրառելի են բռնությունից տուժած երեխայի նկատմամբ:

Հետազոտության խնդիրներն են՝

1) բացահայտել համավարակի ազդեցությունն ընտանեկան բռնությունից երեխայի պաշտպանության և բռնությունը կանխարգելելու իրավակիրառ գործընթացների վրա,

2) արձանագրել համավարակով պայմանավորված ընտանեկան բռնության կանխարգելիչ և բռնարար վարքագծի (գործողությունների) մշտադիտարկում ապահովող միջոցառումների արդյունավետությունը և հասանելի լինելը,

3) ներկայացնել երեխաների մասնակցությամբ ընտանեկան բռնության դեպքերով պետության պատշաճ արձագանքի և արդյունավետ միջամտության վերաբերյալ առաջարկություններ՝ հիմնվելով միջազգային փորձի վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունը կազմելիս կիրառվել են հետևյալ մեթոդները.

փաստաթղթերի ուսումնասիրություն, ներառյալ երկրորդային տեղեկատվության քանակական և որակական վերլուծություն (desk research) - ուսումնասիրվել են քննարկվող ոլորտը կարգավորող օրենսդրությունը (օրենքներ, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր), ինչպես նաև պետական մարմինների, շահագրգիռ

կառույցների և կազմակերպությունների կողմից հրապարակված զեկույցները, իրավական վերլուծություն պարունակող հոդվածները, հաշվետվությունները, ներպետական և միջազգային կազմակերպությունների՝ ոլորտին առնչվող հետազոտական բնույթի, մշտադիտարկման վերաբերյալ նյութերը և փորձագիտական կարծիքները: Ուսումնասիրվել է արտակարգ դրության պայմաններում արագ և արդյունավետ արձագանքի և բռնության կանխարգելմանն ուղղված միջազգային փորձը (համավարակի ժամանակ ձեռնարկված միջոցառումները, ներկայացվող առաջարկությունները): Հետազոտությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հավաքագրված և նրա տարեկան զեկույցներում ներառված երեխաների իրավունքների խախտման մասին փաստագրված տեղեկությունները, երեխաներին առնչվող օրենսդրական բարելավումների վերաբերյալ առաջարկությունները:

Վիճակագրական վերլուծություն – համադրման և համեմատության միջոցով ներկայացվել է ոլորտում դերակատարում ունեցող մարմինների վիճակագրությունը (ՀՀ ոստիկանության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների):

Հարցման մեթոդը – անցկացվել են անհատական խորքային հարցազրույցներ որակական վերլուծության մեթոդի կիրառմամբ: Ընտրվել են ընտանեկան բռնության դեպքերով նախկինում/ներկայում շահառու հանդիսացող անձինք, ովքեր ընդգրկված են եղել երեխայի իրավունքների և շահերի ներկայացման իրավական գործընթացներում:

1. Կովիդ-19 համավարակի ազդեցությունը ընտանեկան բռնության կանխարգելման-տեղեկացման միջոցառումների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում

Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալների՝ աշխարհում շուրջ երեք հարյուր միլիոն երեխաներ ենթարկվում են բռնության իրենց խնամքն իրականացնող անձանց կողմից¹⁰:

Ընտանիքը հանդիսանում է երեխայի կենսագործունեության անմիջական և ապահով միջավայրը, հետևապես, դրա շրջանակում ընտանիքի անդամի (երեխայի համար վստահելի անձի) կողմից բռնության գործադրումը կարող է անգամ զրկել երեխային ինքնապաշտպանումից:

Ոլորտի ուսումնասիրություններն արձանագրում են ընտանեկան բռնության բացասական ներգործությունը երեխայի արժեհամակարգի, սոցիալական վարքագծի, ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա¹¹:

Նշվածից խուսափելու համար կարևոր է ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության և ուժի կիրառման ռիսկերն հավասարակշռել պետության կողմից համարժեք կանխարգելիչ-պաշտպանական մեխանիզմներ գործարկելու միջոցով:

Ընդհանուր մոտեցմամբ՝ ընտանեկան բռնության օրենսդրության իրավակիրառ պրակտիկան լավագույնս է արտացոլում երեխայի իրավունքների ապահովման և բռնությունից պաշտպանություն տրամադրող գործունեության արդյունավետությունը, որի արդյունքներով ձևավորվում է վիճակագրությունը, առանձնացվում են ոլորտի խնդիրները:

Համավարակի մեկնարկից հետո պաշտոնական վիճակագրությունը, նաև իրավապաշտպան կառույցների հրապարակած տվյալները գրանցել են արտակարգ դրության ռեժիմում Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության դեպքերի շեշտակի աճ:

Մասնավորապես, համաձայն ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2019 թվականի ընթացքում ընտանեկան բռնության դեպքերով կիրառվել են *թվով 116 նախազգուշացման և 20 անհետաձգելի միջամտության որոշումներ*, իսկ 2020 թվականի ընթացքում՝ *127 նախազգուշացման և 30 անհետաձգելի միջամտության որոշումներ*¹²:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի վիճակագրությունը ևս հաստատում է, որ ընտանեկան բռնության առաջնային զանգերը միայն 2020 թվականի մարտ-ապրիլ-մայիս ամիսներին աճել են համապատասխանաբար 30%,

¹⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.unicef.org/protection/violence-against-children> :

¹¹ Տես, Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխաների վրա Հայաստանում, Երևան 2020:

¹² Հարցմանն ի պատասխան տրված ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության 22.06.2021թ. թիվ 5/4-2-603 գրությունը:

40% և 50%-ով¹³: Ընտանեկան բռնության դեպքերով դիմումների քանակն ավելացել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ 2019 թվականի 91 դիմում-բողոքի փոխարեն 2020 թվականին կազմելով 127 դիմում բողոք (մոտ 39.6 %)՝¹⁴:

Թերևս, գլխավոր պատճառներից է այն, որ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը, բնակության վայրում մեկուսանալու և սոցիալական հեռավորություն պահպանելու պահանջները ստիպեցին անձին բռնարար ընտանիքի անդամի հետ փակվել տանը, զրկեցին ընտանեկան բռնության ծառայությունների հասանելիությունից, որի արդյունքում առաջացան երեխաներին բռնությունից պաշտպանելու նոր ռիսկեր¹⁵:

Երեխայի ընտանեկան բռնության դեմ ուղղված իրավակիրառ մեխանիզմները պայմանականորեն հնարավոր է բաժանել 2 խմբի՝ կանխարգելիչ և պաշտպանության¹⁶:

Սույն դեպքում, անդրադարձ կկատարենք կանխարգելման միջոցառումներին՝ գլխավորապես ուսումնասիրելով հարցերի այն շրջանակը, որը տեսանելի է եղել մինչև համավարակը, իսկ արտակարգ դրության ռեժիմում կրկնակի վտանգել է երեխաների ֆիզիկական ապահովությունը, նվազեցրել պաշտպանությունը բռնության հոգեբանական ներգործությունից :

Հետազոտության մեջ պարտադիր է համարվել դիտարկել արդյոք տվյալ միջամտության գործողությունները համավարակի ընթացքում ապահովել են պատշաճ արձագանք երեխաների նկատմամբ բռնության հարցերով և գործել են այլընտրանքային միջոցներ, թե ոչ:

¹³ Վիճակագրությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://www.azatutyun.am/a/30563169.html> , https://coalitionagainstviolence.org/en/telephone-calls-to-domestic-violence-hotlines-increased-by-50/?fbclid=IwAR2SE8tawQENB-t2zQ6_WskRWrk6ptZqoM1B_axdZMreR1EkN0jFHEwDsD4:

¹⁴ Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2020թ. տարեկան հաղորդումը, 1134 էջում, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf?fbclid=IwAR0M0yoz7p-7e-wlQ6qH8b1PiFzf3_klKQrmCg4-nTadX7R38L4I0IsCo84 :

¹⁵ Համավարակով պայմանավորված տեղաշարժի սահմանափակումների և մեկուսացման պահանջների ազդեցությունը գնահատվել է երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերով, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.unicef.org/press-releases/children-increased-risk-harm-online-during-global-covid-19-pandemic> :

¹⁶ Պաշտպանական մեխանիզմները միաժամանակ ունեն միջամտող նշանակություն, քանի որ սահմանափակում, կարգավորում կամ պարտավորեցնում են կոնկրետ վարքագծի, գործողությունների կատարումը:

1.1. Կանխարգելիչ իրազեկման միջոցառումների կիրառման պրակտիկան Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում

Ընտանեկան բռնության ոլորտում իրավապաշտպան գործունեությունը կազմակերպվում է կանխարգելման, ուղղորդման և պաշտպանության (միջամտության) միջոցառումներ կիրառելու միջոցով, որոնց բնորոշ է համակարգային սերտ կապվածությունը:

Երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության կանխարգելման գործողությունները մեկնարկում են մինչդատական փուլում՝ անհրաժեշտության դեպքում ներառելով ուղղորդման և պաշտպանող միջոցները: Այս փուլի պատշաճ և հասցեական իրացումը կարող է անգամ բացառել դատական վարույթ նախաձեռնելու պահանջը:

Կանխարգելիչ միջոցառումների համակարգն ընդգրկում է իրազեկման (տեղեկացման), ուղղորդման և վերահսկողությունն ապահովող գործառույթները, (կանխարգելիչ հաշվառման ենթարկելու և մշտադիտարկում իրականացնելու գործողություններ), որոնք, սակայն, բավարար չափով հարմարեցված չեն երեխայի կարիքներին:

Մասնավորապես, կանխարգելիչ միջոցառումների ցանկում հանրային իրազեկման (տեղեկացվածության) բարձրացման գործողություններն արժեքավոր են նրանով, որ նպաստում են ընտանեկան բռնությունը արդարացնող կարծրատիպերի վերացմանը՝ հակակշռելով բռնարար վարքագծին:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան¹⁷ պետությունների համար որպես կանխարգելիչ նախաձեռնություն պարտադիր է համարում հանրային իրազեկման արշավներ և ծրագրեր կազմակերպելը՝ նպատակ ունենալով բարձրացնել հասարակության իրազեկման և ընկալումների մակարդակը երեխաների նկատմամբ բռնությունը և դրա ազդեցությունը կանխելու անհրաժեշտության մասին: Թեև Օրենքը հպանցիկ ամրագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցում են ընտանեկան բռնության դեմ պայքարի բնագավառում հանրության իրազեկման միջոցառումներին, սակայն Օրենքի որևէ դրույթ չի մանրամասնում, թե ինչ հաճախականությամբ, ձևաչափով և ում կողմից պետք է կազմակերպվեն և անցկացվեն իրազեկման գործողությունները: Գործնականում իրազեկման արշավներ և քայլերթեր պարբերաբար կազմակերպում են «Ընդդեմ կանանց

¹⁷ Այսուհետ Ստամբուլի կոնվենցիա, ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2011թվականի ապրիլի 7-ին, ստորագրվել է Թուրքիայի Հանրապետության Ստամբուլ քաղաքում 2011 թվականի մայիսի 11-ին, ուժի մեջ է մտել 2014թվականի օգոստոսի 1-ին: Կոնվենցիան ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարին վերաբերող առաջին ամբողջական միջազգային իրավական փաստաթուղթն է, որը սահմանում է երեխային ընտանեկան բռնությունից պաշտպանելու ուղենիշային մոտեցումները և հիմնական սկզբունքները: Հայերեն թարգմանությամբ հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/168046246d> :

նկատմամբ բռնության» կռալիցիան¹⁸, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (հիմնականում նախընտրում է մեղիատեղեկացման ձևաչափը), և ոլորտի Լիազոր մարմինը¹⁹ համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կառույցների հետ: Այնուհանդերձ, գերակա խնդիրը մնում է այն, որ իրազեկման (տեղեկացման) միջոցառումները (տպագիր նյութեր, սոցիալական գովազդ, տեսահոլովակներ, տեղեկատվական գրքույկներ, պաստառներ և այլն) հիմնականում հարմարեցված չեն անչափահասների լսարանի համար, և թիրախում ոչ թե բռնության ենթարկվող երեխաներն են, այլ կանայք: Բացի այդ, չի տրամադրվում երեխայի համար մատչելի տեղեկատվություն ընտանեկան բռնության ազդանշանների և բռնության դեպքերի մասին հրատապ հաղորդում փոխանցելու մասով: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ ընտանեկան բռնության վտանգների և ընտանիքի անդամի կողմից հնարավոր բռնարարքների մասին թերի համակարգված, հատվածային տեղեկատվությունը, կախված երեխայի տարիքային, սոցիալ-անձնային հատկանիշներից կամ հասունության մակարդակից, կարող է նրա մոտ առաջացնել վախի, ընկճվածության կամ օտարության զգացումներ: Հետևապես, նաև երկարաժամկետ կարգավորման առումով նպատակահարմար է դիտարկել կրթական հաստատություններում ուսումնական-տեղեկատվական ծրագրերի ներդրումը, ինչպես նաև համայնքային մակարդակով երեխաների մասնակցությամբ կանոնավոր (օրինակ, եռամսյակային, տարեկան) իրազեկման արշավների կազմակերպումը՝ օգտագործելով քաղաքացիական հասարակության փորձառությունը:

Օրենքը, բռնության կանխարգելման համակարգային մոտեցումից ելնելով, բժշկական և կրթական կառույցների աշխատակազմերի համար նախատեսել է վերապատրաստման, իրազեկման միջոցառումներ անցկացնելու պահանջ²⁰, սակայն, որևէ փաստաթղթով չեն հստակեցվել երեխայի հանդեպ ընտանեկան բռնության ցուցիչները, որպիսիք ուղեցույց կհանդիսանան երեխաների մասնակցությամբ ընտանեկան բռնության դեպքերը ժամանակին բացահայտելու, անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու և բռնության մասին տեղեկություններն իրավասու մարմիններին հաղորդելու համար:

Նշված կառույցների կողմից երեխաների ընտանեկան բռնության դեպքերի նույնացման վիճակագրությամբ հնարավոր կլինե՞ր եզրահանգել՝ որքանով են բռնության տեղեկությունները հասանելի կրթական և առողջապահական

¹⁸ 2010 թվականից ի վեր ամեն տարի «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կռալիցիան նշում է հոկտեմբերի 1-ը որպես «Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր»՝ իրականացնելով մասշտաբային իրազեկման ակցիաներ:

¹⁹ Ընտանեկան բռնության հարաբերություններում Լիազոր մարմին է հանդիսանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ):

²⁰ Տես, Ընտանեկան բռնության մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և 17-րդ հոդվածը:

համակարգին, և արդյոք արդյունավետ են եղել իրազեկման միջոցառումները²¹:

Համավարակի ընթացքում կանխարգելիչ իրազեկման միջոցառումների նշանակությունը կտրուկ նվազեց՝ պայմանավորված արտակարգ դրության ռեժիմում մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ: Մասնավորապես, արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի թիվ 298-Ն որոշմամբ և Պարետի 24.03.2020 թվականի թիվ 16 որոշմամբ²² ՀՀ ողջ տարածքում սահմանափակվեց մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը, սահմանվեց մշտական բնակության վայրում ինքնամեկուսանալու պահանջը, արգելվեցին հանրային միջոցառումները, տրանսպորտային միջոցների անարգել մուտքը և ելքը, դադարեցվեց ուսումնական-կրթական հաստատությունների գործունեությունը: Բժշկական կազմակերպությունները մեծամասամբ վերափոխվեցին կորոնավիրուսային հիվանդությունը սպասարկող կենտրոնների:

Ընդ որում, որևէ բացառություն չսահմանվեց ընտանեկան բռնության դեպքերով կանխարգելիչ-իրավապաշտպան գործունեություն իրականացնելու, նաև ընտանեկան բռնության տվյալների հասանելի և հրատապ հաղորդումն ապահովելու համար: Ըստ էության, ամբողջությամբ անտեսվեց ընտանեկան բռնության հանրային վտանգավորության բարձր աստիճանը, բռնարար հարաբերություններում երեխայի առաջնային շահերի (ֆիզիկական և հոգեբանական անձեռնամխելիության ապահովում) հետևողականորեն երաշխավորելու պահանջը:

Արդյունքում, անհնարին դարձավ ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկման (տեղեկացման) հանրային միջոցառումներ (հավաքներ, ակցիաներ, կլոր սեղաններ, աշխատանքային քննարկումներ) անցկացնելը, ինչպես նաև երկրորդային, միջնորդավորված օղակից (կրթական և առողջապահական ոլորտի կառույցներ, պետական գերատեսչություններ) ընտանեկան բռնության դեպքերի մասին իրազեկելը: Փոխարենը, որպես այլընտրանք, պետությունը բռնության ռիսկի տակ գտնվող երեխաների համար չառաջարկեց ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի այլ գործիքակազմ:

Հայաստանում կիրառված սահմանափակումներին այլընտրանք կարող էր ծառայել ընտանեկան բռնության կանխարգելման և տեղեկացվածության մակարդակի բարձրացման առումով մի շարք մեդիաիրազեկման արշավների

²¹ Ընտանեկան բռնության մասին օրենքի համաձայն ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը (ներառյալ կրթական, առողջապահական հաստատությունների վիճակագրություն) վարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՀՀ կառավարության 10.10.2019թ. թիվ 1381-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ թղթային ներկայացմամբ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135273>: Ներկայումս Լիազոր մարմնի կողմից ընթացքի մեջ են կենտրոնացված հաշվառումը միասնական էլեկտրոնային հարթակի կիրառմամբ կազմակերպելու աշխատանքները:

²² Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3969.pdf> :

կազմակերպումը՝ օգտագործելով նաև համացանցային հասանելիության աղբյուրները (թիրախային լսարանի՝ երեխաների համար հոլովակների պատրաստում, տեղեկատվական բնույթի ծրագրերի հեռարձակում, ծնողավարության թեմատիկ հաղորդումներ և այլն): Արդյունավետ միջոց կլինե՞ր առցանց հարթակի գործարկումը՝ հասցեատեր պետական մարմինների մասնակցությամբ՝ երեխայի ընտանեկան բռնության հարցերով քննարկումներ ծավալելու, բռնության դեպքերով տեղեկություններ փոխանցելու համար: Նման հարթակների ստեղծման փորձառություն ունեն «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, Երեխաների իրավունքների պաշտպանության ցանցը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և շահագրգիռ այլ կազմակերպությունները: Միասնական հարթակները կապահովեն անմիջական ֆիզիկական շփումներից զերծ միջավայր՝ զուգահեռ խնայելով տրանսպորտի, ժամանակի և կազմակերպչական այլ ռեսուրսների վատնումը:

1.2. Տեղեկացման (ուղղորդման) ծառայության պրակտիկան Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում

Կանխարգելիչ միջոցառումների համակարգի կարևոր բաղադրիչներից է «Թեժ գիծ» հեռախոսահամարների գործարկումը, ինչը հնարավորություն է տալիս բռնության ենթարկված անձին անհապաղ կապվել աջակցության կենտրոնի աշխատողի (կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի) հետ և ստանալ անհրաժեշտ օգնությունը²³: Թեժ գծերն ընտանեկան բռնության դեպքերի առաջնային գնահատման և անձի կարիքների հաշվառման օպերատիվ գործիք են, հետևապես, կարևոր է ապահովել նման հեռախոսահամարների մշտական հասանելիությունը ՀՀ ողջ տարածքում: Հայաստանում, աջակցության կենտրոններից գատ, մի շարք պետական մարմիններում (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, Արդարադատության նախարարությունում, Արտակարգ իրավիճակների նախարարությունում, ՀՀ ոստիկանությունում) նույնպես գործում են թեժ գծեր, սակայն, դրանք ընդհանուր են բոլոր ահազանգերի համար, և, ըստ էության, ընտանեկան բռնության տեղեկությունները միջնորդավորված են փոխանցում աջակցության կենտրոններին²⁴:

²³ Տես, Ընտանեկան բռնության մասին օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

²⁴ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական էլեկտրոնային կայքում հրապարակված են աջակցության կենտրոնների թեժ գծերի 24 ժամ հասանելիություն ունեցող հեռախոսահամարները, հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.mlsa.am/?page_id=19928:

Համաձայն «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության²⁵ ներկայացուցչի կողմից տրամադրված վիճակագրության²⁶ Կենտրոնի թեժ գծին ստացված առաջնային հեռախոսազանգերի թիվը 2018 թվականի ընթացքում կազմել է 579, 2019 թվականի համար՝ 716, և 2020 թվականի համար՝ 893: Ըստ նույն կենտրոնի վիճակագրության՝ 2018, 2019 թվականների և 2020 թվականի առաջին կիսամյակի համար ընտանեկան բռնության հոգեբանական խորհրդատվություն տրամադրվել է համապատասխանաբար 232, 225 և 175 երեխաների:

Նշված ծառայության մասով խնդրային է այն հարցը, որ Հայաստանի տարածքում չի գործում երեխաների համար առանձնացված միասնական թեժ գծի հեռախոսահամար, որը նեղ մասնագետի միջոցով կապահովի այդ ծառայության հեշտ և արագ հասանելիությունը շահառու երեխաների համար: Նշվածը կխթանի երեխային օպերատիվ և հասցեական աջակցության ցուցաբերմանը, առաջնային կարիքների նախնական հաշվառմանը:

Մեկ այլ խնդիր է այն, որ երեխաների պաշտպանության ազգային համակարգի մաս կազմող խնամակալության և հոգաբարձության մարմինները/հանձնաժողովներն²⁷ առհասարակ չունեն թեժ գծի ծառայություն: Մինչդեռ, վերջիններս հանդիսանում են միակ լիազորված պետական մարմինը, որը ներկայացնում է երեխայի լավագույն շահերն ընտանեկան բռնության հարաբերություններում, ներառյալ ընտանիքի անդամների հետ շփումների ժամանակ՝ ընդհուպ իրացնելով երեխային ծնողներից վերցնելու գործառույթ²⁸:

²⁵ Հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2011 թվականին, զբաղվում է ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների պաշտպանությամբ, ներկայումս միակ կենտրոնն է, որ ընտանեկան բռնության դեպքերը սպասարկում է Հայաստանի ողջ տարածքում, ունի ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ապաստարաններ:

²⁶ Կենտրոնի վիճակագրական տվյալներն ամփոփվում են վերջինիս կողմից պատրաստվող ամենամյա զեկույցներում:

²⁷ Հայաստանում գործում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային մակարդակում՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, մարզային մակարդակում՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և համայնքային մակարդակում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները/հանձնաժողովները: Նշված մարմիններից առաջին 2-ը բացառապես խորհրդակցական են և նրանց գործունեությունն առավելապես ուղղված է երեխայի պաշտպանության միասնական պետական քաղաքականությունն ապահովելուն: Համապատասխան հղումները ստորև՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=135648>,

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=51815>,

<https://www.arlis.am/Documentview.aspx?docid=102686>:

²⁸ ՀՀ կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշումը (Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին), որոշման 9-րդ մասի 22-րդ կետ: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=106809> :

Բացի այդ, թիրախային օրենսդրական լուծումներ մշակելու առումով երեխաների թեժ գծին կատարված զանգերի վերլուծությունը թույլ կտա հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն ընտանիքում երեխաների բռնության վտանգների, սպառնացող ռիսկերի, բռնության երկրորդային ազդեցության, պահանջվող աջակցության բնույթի, ըստ մարզային բաշխվածության՝ երեխաների բռնության թվերի և այլնի վերաբերյալ:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ Բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իրավունքի վերաբերյալ թիվ 13 (2011) Ընդհանուր մեկնաբանության մեջ նշել է, որ շուրջօրա գործող անվճար թեժ գծի ծառայությունը երեխայի նկատմամբ բռնության մասին ահազանգելու մեխանիզմ է²⁹: Այս առումով նաև երեխայի ընտանեկան բռնության դեպքի մասին բարձրաձայնումն իրացնում է նրա լավագույն լինելու իրավունքը:

Դիտարկենք ինչպիսին է եղել քննարկվող ոլորտում միջազգային փորձառությունը համավարակի ժամանակ ձեռնարկված միջոցների և ընդհանուր մոտեցումների շուրջ:

2020 թվականի ապրիլի 20-ին ԵԽ Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով կոնվենցիայի անդամ պետությունների կոմիտեն հրապարակեց հոչակագիր, որում նշեց պետությունների կողմից համավարակի ժամանակ ընտանեկան բռնությանը համակարգված և ամբողջական մոտեցում ցուցաբերելու պարտականության մասին: Հոչակագրով պետությունների համար առաջարկվեց համալիր քաղաքականության մոդել՝ համավարակի ընթացքում նաև ընտանեկան բռնության ենթարկված անչափահասներին պաշտպանելու համար³⁰:

Մասնավորապես, օրինակելի է Իսպանիայի փորձը, որտեղ գենդերային բռնությունից տուժած անձանց պաշտպանության և աջակցության ծառայությունների տրամադրումը ներառվեց գործունեության այն կենսական տեսակների ցանկում, որոնք թույլատրվում է շարունակել արտակարգ դրության ժամանակ³¹:

Իռլանդիայում ոստիկանությունը գործարկեց հատուկ ծառայություն, որի նպատակն էր սեփական նախաձեռնությամբ կապ հաստատել բոլոր այն

²⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf, էջ 19-20:

³⁰ Declaration of the Committee of the Parties to the Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence (Istanbul Convention) on the implementation of the Convention during the COVID-19 pandemic, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/declaration-committee-of-the-parties-to-ic-covid-/16809e33c6> :

³¹ Տես, արագ գնահատում, covid-19 պանդեմիայի ժամանակ պետության արձագանքն ընտանեկան բռնությանը, առանցքային դիտարկումներ, արդյունքներ և առաջարկներ, Երևան, 2020:

տուժողների հետ, ովքեր նախկինում ահազանգել են ոստիկանություն՝ ընտանեկան բռնության հետ կապված հարցով³²:

Բսպանիան և Ֆրանսիան, հեռախոսային հաղորդագրությունների միջոցով իրազեկեցին բնակչությանը, որ ընտանեկան բռնության ենթարկված, բայց համապատասխան աջակցություն ստանալու համար դիմելու հնարավորություն չունեցողները կարող են այցելել ցանկացած դեղատուն և նշել, որ ցանկանում են գնել «դիմակ-19», որն էլ բավարար կլինի, որ դեղատան աշխատակիցը զանգահարի ոստիկանություն³³: Բսպանիայի կառավարությունը նաև հայտարարեց առցանց զրույցի («chat») ծառայություն ստեղծելու մասին, որը ներառում էր աշխարհագրական տեղորոշման գործառույթ՝ տուժողներին թույլ տալով կապ հաստատել ոստիկանության հետ, ինչպես նաև մեկուսացման ընթացքում ստանալ առցանց հոգեբանական աջակցություն³⁴:

Մեծ Բրիտանիայում հանձնարարվեց բանկային և առողջապահական ոլորտի աշխատողներին ուշադիր լինել ընտանեկան բռնության հնարավոր կողմնորոշված ազդանշաններին³⁵:

Վրաստանում գործարկվեց «երեխաների թեժ գիծ 111» ծառայությունը՝ համավարակի ժամանակ երեխաների կարիքներին անհապաղ արձագանքելու համար, իսկ Մեքսիկայում երեխաների օգնության հեռախոսահամարների օպերատորները վերապատրաստվեցին՝ ընտանիքում երեխայի բռնության վերաբերյալ ակտիվ լսողական նշանները գրանցելու և առաջին հոգեբանական օգնությունը ցուցաբերելու նպատակով³⁶:

Անկասկած, նման միջոցների նախատեսումը պայմանավորված էր սահմանափակումների պատճառով բռնության կանխարգելման, դեպքերի ուղղորդման և թեժ գծի ծառայությունների դժվար հասանելիությամբ:

Նկատի ունենալով հեռավար աշխատանքին անցնելու ռիսկերը, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու դժվարությունները (մեկուսանալու պահանջ, ազատ տեղաշարժվելու արգելք) և թեժ գծի ծառայության հասանելիության խոչընդոտները (միասնական թեժ գծի բացակայություն, այլ ահազանգեր սպասարկելու պատճառով գերծանրաբեռնված աշխատելը) անհրաժեշտ էր ներդնել տեղեկացման ծառայության այլ միջոցներ: Մասնավորապես, ընտանեկան

³² “Quick and robust’ garda response to domestic violence reports promised” հասանելի է հետևյալ հղումով <https://www.rte.ie/news/ireland/2020/0401/1127724-gardai-domestic-violence-cases/>:

³³ “France responds to domestic abuse rise” հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.odt.co.nz/news/world/france-responds-domestic-abuse-rise>:

³⁴ Europe braces for domestic abuse ‘perfect storm’ amid coronavirus lockdown, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://news.trust.org/item/20200326160316-710uf/> հղումով :

³⁵ Տես, 34 համարի ներքո նույն հղումով:

³⁶ Protecting Children from Violence in the Time of COVID-19, Disruptions in prevention and response services, published by UNICEF in August 2020, հասանելի է հետևյալ հղումով՝ file:///C:/Users/User/Downloads/Protecting-children-from-violence-in-time-of-COVID-English_2020.pdf :

բնությանն արագ արձագանքի լուծում կարող է հանդիսանալ ինտերակտիվ պատուհանի միջոցով համացանցային հաղորդագրություն կամ հեռախոսային հաղորդագրություններ ուղարկելու ծրագրերի ներբեռնումը՝ տեղորոշման հրահանգի հնարավորությամբ, երեխաների ընտանեկան բնության դեպքերի արձանագրման միասնական հարթակի ձևավորումը և այլն:

Օպերատիվ և հետադարձ կապի գործարկման նպատակով անհրաժեշտ է նաև բնակչությանը և իրավասու/պատասխանատու կառույցների աշխատակիցներին հեռահաղորդակցման, կապի բոլոր միջոցներով իրազեկել տվյալ պահին ընտանեկան բնության ծառայություններ մատուցող կենտրոնների և դրա աշխատակիցների կոնտակտային տվյալների մասին:

2. Համավարակի ժամանակահատվածում ընտանեկան բռնության դեպքերով կանխարգելիչ հաշվառման ենթարկելու և մշտադիտարկում (հսկողություն) իրականացնելու գործառնությունները Հայաստանի Հանրապետությունում

Կանխարգելիչ միջոցառումների հաջորդ խումբը կանխարգելիչ հաշվառման վերցնելու, մշտադիտարկում (հսկողություն) իրականացնելու գործողություններն են, որոնք լրամշակումների կարիք ունեն նորմաստեղծ և իրավակիրատ հարցերում:

Կանխարգելիչ հաշվառման ընթացակարգի պատասխանատուն ՀՀ ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումն է: Վերջինս մշտադիտարկման և հսկողություն սահմանող գործողությունների միջոցով կառավարում է նոր բռնության հնարավոր ռիսկերը և վտանգները: Միևնույն ժամանակ, քննարկվող գործառնությամբ կարևոր նշանակություն ունի բռնություն գործադրած անձի նկատմամբ կիրառված միջամտության (սահմանափակումների) արդյունավետությունը գնահատելու տեսանկյունից:

Կանխարգելիչ հաշվառման համակարգը ներառում է բռնություն գործադրած անձին հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու, ինչպես նաև հաշվառման ժամանակահատվածում մշտադիտարկում իրականացնելու կարգավորումները³⁷:

Նկատի ունենալով, որ կանխարգելիչ հաշվառման հարաբերություններում նույնպես երեխաներին առնչվող առանձին կարգավորումները բացակայում են, ուստի ստորև ներկայացված խնդիրները հավասարապես կիրառելի են բռնությունից տուժած յուրաքանչյուր անձի նկատմամբ:

2.1. Կանխարգելիչ հաշվառման համակարգի կիրառումը Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում

Օրենքի համաձայն՝ կանխարգելիչ հաշվառման գործառնությամբ վերապահված է ոստիկանությանը: Վերջինս առանձին իրավական ակտի ընդունմամբ (ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019 թվականի թիվ 15-Լ հրամանով³⁸) սահմանել է բռնություն գործադրած անձանց հաշվառման կարգը: Կանխարգելիչ հաշվառման վերցնելու պարտադիր պայման է նախատեսվել անձի կողմից բռնություն գործադրելու փաստը: Ընդ որում, բռնության առկայությունը պետք է հաստատվի պաշտպանության միջոցի (նախագուշացում, անհետաձգելի միջամտության

³⁷ Օրենքի 11-րդ հոդվածում ամրագրված են կանխարգելիչ հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու իրավական հիմքերը, հաշվառման ժամանակահատվածը, մշտադիտարկման գործողությունների համար պատասխանատու պետական մարմինները:

³⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/1ea73f6757b9b265cb697839f0c9a84b.pdf> :

որոշում, պաշտպանական որոշում) կայացմամբ կամ անձն ունենա դատվածություն ընտանիքում բռնության հետ կապված հանցանքի համար:

Կանխարգելիչ հաշվառման ենթարկելու պահից ոստիկանության և սոցիալական ծառայության մարմնի աշխատակիցները սահմանված ժամկետում իրականացնում են բռնություն գործադրած անձի (բռնարար ընտանիքի անդամի) վարքագծի (գործողությունների) մշտադիտարկում:

Սույն տիրույթում խնդրահարույց է այն, որ Օրենքին հակասող կարգավորմամբ ՀՀ ոստիկանության պետի հրամանով արգելվել է կանխարգելիչ հաշվառման վերցնել հոգեկան որևէ հիվանդություն ունեցող և բժշկական հաստատությունում հաշվառված անձին³⁹: Ավելին, հատուկ շեշտվել է, որ հաշվառման մեջ գտնվող անձը հանվում է կանխարգելիչ հաշվառումից, եթե հաշվառման ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել է համապատասխան բժշկական հաստատությունում⁴⁰: Ստացվում է, որ ներառյալ երեխայի նկատմամբ ընտանեկան բռնության դեպքերով՝ բռնարար ընտանիքի անդամն ազատվում է կանխարգելիչ հաշվառման ենթարկվելուց և դրա շրջանակում իրականացվող մշտադիտարկման գործողությունների ազդեցությունից, եթե հոգեկան հիվանդության հիմքով ունի բժշկական հաշվառում: Այլ կերպ, մի կողմից, ոստիկանությունը պաշտպանության միջոցի (օրինակ, նախազուշացման) շրջանակում ճանաչում և հաստատում է բռնություն գործադրելու փաստը, մյուս կողմից, հրաժարվում է իրացնել այդ միջոցի իրավաչափ հետևանքը՝ կանխարգելիչ հաշվառման ենթարկելը:

Նման պայմաններում, նոր կամ շարունակական բռնության դրսևորումները և վտանգները մնում են անկառավարելի, իսկ բռնարարն ամբողջությամբ ազատվում է պետության կանխարգելիչ միջամտության կիրառումից:

Մինչդեռ, ինչպես հայտնի է, հոգեկան հիվանդություն ունեցող անձանց վարքագիծը կարող է լինել անկանխատեսելի, իսկ կրկնակի բռնություն կիրառելու կամ վնասելու վտանգներն առավել բարձր:

Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ պաշտպանության միջոցի (անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման) գործողության ժամկետները շատ ավելի կարճ են ⁴¹, քան կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվելու

³⁹ Տես, ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019 թվականի թիվ 15-Լ հրաման, Ընդհանուր դրույթներ, 5-րդ մաս:
⁴⁰ Տես, նույն հրամանի «Ընտանիքում բռնություն գործադրած չափահաս անձի կանխարգելիչ հաշվառում» վերտառությամբ բաժնի 26-րդ մասի 1-ին կետը:
⁴¹ Անհետաձգելի միջամտության որոշման կայացման առավելագույն ժամկետը 20 օր է, իսկ պաշտպանական որոշման դեպքում՝ 6 ամիս, որը դատարանի հայեցողությամբ կարող է 2 անգամ երկարաձգվել՝ յուրաքանչյուր անգամ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով (տես, Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և 8-րդ հոդվածի 4-րդ մասը):

ժամկետը⁴²: Արդյունքում, պաշտպանության միջոցների գործողության դադարման փաստով բռնարարը կարձ ժամանակում կարող է ազատվել նաև պետության պաշտպանական միջամտության ազդեցությունից:

2.2. Ընտանեկան բռնությունից երեխայի պաշտպանությունը մշտադիտարկում (հսկողություն) իրականացնելու գործողությունների տիրույթում Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում

Կանխարգելիչ հաշվառման շրջանակում իրականացվող մշտադիտարկման (հսկողություն սահմանող) գործողությունները նպատակ ունեն դիտարկելու բռնություն գործադրած անձի վարքագիծը և անհրաժեշտ տեղեկություններ հավաքագրելու միջոցով կանխել հետագա բռնություններն ընտանիքում: Միաժամանակ, տվյալ միջոցառումներն ուղղված են բացահայտելու պաշտպանության միջոցներով կիրառված սահմանափակումների խախտումները՝ երաշխավորելով բռնությունից տուժած անձի պաշտպանությունը հնարավոր նոր բռնություններից:

Մշտադիտարկման գործառույթի իրացումը պահանջում է ոստիկանության ծառայողի և սոցիալական աշխատողի կողմից այցելությունների կատարում բռնության ենթարկված և բռնություն գործադրած անձանց բնակության (գտնվելու) վայրեր, վերջիններիս հետ առանձին հանդիպումների անցկացում, ինչպես նաև պետական, համայնքային մարմիններից, կազմակերպություններից և ուսումնական հաստատություններից տեղեկությունների հավաքագրում հաշվառված անձի վարքագծի, հակաիրավական, հակասոցիալական գործողությունների մասին:

Այս առումով շոշափելի բացթողումներից է այն, որ երեխաների ընտանեկան բռնության դեպքերով չեն սահմանվել մշտադիտարկման հատուկ գործողություններ, այդ թվում՝ երեխային ընտանեկան բռնության ենթարկելու մասին նրա ուսումնական հաստատությանը իրազեկելու, բռնարար ընտանիքի անդամի հետ համատեղ բնակվելու անվտանգությունը պարբերաբար գնահատելու պահանջների մասով և այլն:

Մշտադիտարկում ապահովող գործողությունները ներկայացված են ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019 թվականի թիվ 15-Լ և 17.07.2019 թվականի թիվ 14-Լ հրամաններում: Հսկողության ընթացակարգի հիմնական գործիք սահմանվել է ֆիզիկական այցելություններ կատարելը, անմիջական հանդիպումների անցկացումը, որի միջոցով գնահատվում է ընտանիքում առկա իրավիճակը,

⁴² Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում կանխարգելիչ հաշվառման ընդհանուր ժամկետը սահմանվել է մեկ տարին, որից հետո անձը հանվում է հաշվառումից պայմանով, որ այդ ընթացքում նրա նկատմամբ չի կայացվել նոր անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ համապատասխան հանցագործության համար մեղադրական դատավճիռ:

պաշտպանության միջոցների պահպանումը: Մինչդեռ, բռնարարի նկատմամբ կիրառված որոշ սահմանափակումները (բռնարար ընտանիքի անդամին համատեղ բնակության վայրից հեռացնելը և մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալն այդտեղ վերադառնալու արգելքը, բռնության ենթարկվածին կոնկրետ հեռավորությունից ավելի մոտենալու, նրան այցելելու և կապի միջոցներով հաղորդակցվելու արգելքները) կենսական նշանակություն ունեն բռնության ենթարկված երեխաների համար և ապահովում են անվտանգության երաշխիքներ: Մյուս կողմից էլ պետք է հաշվի առնել, որ շատ դեպքերում երեխան օբյեկտիվորեն հնարավորություն չունի ինքնուրույն և հետևողականորեն բարձրաձայնելու իր հանդեպ բռնության ռիսկերի և իրական վտանգների մասին:

Հետևապես, գործնականում այցելությունների միջոցով սահմանափակումների խախտումներն արձանագրելը չի ապահովում օպերատիվ հսկողություն բռնարարի վարքագծի կառավարման նկատմամբ:

Ավելին, համավարակի կամ արտակարգ դրության այլ պայմաններում կարող է առհասարակ անհնարին լինել այդպիսի այցելությունների կատարումը: Մասնավորապես, Պարետի 24.03.2020 թվականի թիվ 15⁴³ որոշմամբ՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն անցում կատարեցին հեռավար/առցանց եղանակով աշխատանքին, արգելվեց աշխատողների մուտքը աշխատավայր:

Մինևույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, համավարակի ընթացքում պետությունն ընտանեկան բռնության ոլորտը չընդգրկեց հատուկ արձագանքի և բացառությունների ցանկում: Իր հերթին, ոստիկանությունը ներքին կարգավորումների մակարդակում որևէ կերպ չարձագանքեց երեխայի հետ համատեղ բնակվող (նույն վայրում մեկուսացած) բռնարար անդամի կողմից ազդեցության և վերահսկման ռիսկերի մեծացմանը: Մշտադիտարկման և հսկողության ընթացիկ աշխատանքների կազմակերպումը չհամալրվեց հավելյալ ակտիվ գործողություններով, իսկ ֆիզիկական այցելությունների միջոցով կանխարգելիչ գործառնություններ ապահովելը դարձավ անհնարին:

Հավելենք նաև, որ կոնկրետ համավարակի դեպքում հաճախակի տնային այցելությունները կարող են բերել հիվանդության տարածման աճի (օրինակ, ոստիկանության ծառայողը կարող է վարակի փոխանցման աղբյուր հանդիսանալ՝ չիմանալով, որ վարակակիր է, կամ կարող է ոչ պատշաճ պահել անվտանգության կանոնները՝ սխալ կրել դիմակը, խախտել սոցիալական հեռավորության սահմանաչափը և այլն):

⁴³ Տես, Պարետի 2020 թվականի մարտի 24-ի թիվ N 15 որոշում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3968.pdf> :

Հետևապես, հարկավոր էր մշակել անմիջական այցելություններին հավասարակշռող գործողություններ, ինչպիսիք կարող էին լինել օրինակ, երեխաների օգնության ներքին շուրջօրյա հեռախոսահամարների գործարկումը, բռնության կողավորված ազդանշանների շրջանառումը, բռնարար ընտանիքի անդամին տեղորոշելու ծրագրի, բռնության ենթարկված երեխայի բնակության վայրին մոտենալու ինքնաշխատ ահազանգի կիրառումը և այլն:

Եզրահանգումներ և առաջարկություններ

Ամփոփելով երեխաների իրավական պաշտպանվածության ոլորտում արձանագրված բացթողումների և թերի կարգավորումների վերլուծության մասով քննարկված խնդիրները (երեխաների ընտանեկան բռնության կանխարգելման և մշտադիտարկում ապահովող միջոցառումների գործնական կիրառման առումով)՝ հնարավոր է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. համավարակի մեկնարկից հետո արտակարգ դրության սահմանափակումներից բացառություն նախատեսող գործունեությունների ցանկում չեն ընդգրկվել երեխաների ընտանեկան բռնության կանխարգելման և պաշտպանական միջոցառումները,
2. արտակարգ դրության օրերին չեն իրականացվել իրազեկման, տեղեկատվության ուղղորդման միջոցների հանրային իրազեկման աշխատանքներ՝ ուղղված ընտանեկան բռնության ենթարկված և բռնության սպառնալիքի տակ գտնվող երեխաների թիրախային լսարանին,
3. ընտանեկան բռնության ոլորտի իրավասու մարմինները (ներառյալ ոլորտի միասնական քաղաքականության ապահովման պատասխանատու կառույցները) չեն գործարկել համավարակի սահմանափակումներին հակակշռող հատուկ մշակված ծրագրեր և ընթացակարգեր,
4. թեժ գծի ծառայությունները համակարգված և հասանելի չեն եղել ընտանեկան բռնության շահառու երեխաների համար:

Առաջարկվում է՝

իրավական բնույթի առաջարկություններ

- ✓ վերանայել ընտանեկան բռնություն գործադրած հոգեկան հիվանդություն ունեցող անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու իրավական կարգավորումները, նվազագույնը երեխաների ընտանեկան բռնության դեպքերով բացառել կանխարգելիչ հաշվառման ենթարկելու արգելքը,
- ✓ երեխաների ընտանեկան բռնության դեպքերով նախատեսել պաշտպանության միջոցների պահպանման և հսկողության (մշտադիտարկում) հետ կապված օրենսդրական կարգավորումներ, բռնարարի վարքագծի վերահսկողությունն ապահովող միջոցառումներ (ոստիկանության ներքին օպերատիվ հեռախոսահամարի անվճար և շուրջօրյա կապ, երեխային կամ նրա բնակության վայրին մոտենալու ինքնաշխատ ահազանգի գործարկում),
- ✓ սահմանել ընտանեկան բռնության կանխարգման-տեղեկացման միջոցառումների իրականացման պատասխանատու կառույցների ցանկը,

կազմակերպչական բնույթի առաջարկություններ

- ✓ իրականացնել ընտանեկան բնության հարցերով երեխաների լսարանին հարմարեցված երկարաժամկետ կրթական-ուսումնական ծրագրեր, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպել մեդիաարշավներ (տեսահոլովակներ, թեմատիկ հաղորդումներ և այլն),
- ✓ գործարկել երեխաների համար առանձնացված միասնական թեժ գծի անվճար և շուրջօրյա ծառայություն, վերապատրաստել օպերատորներին՝ ապահովելով առաջնային խորհրդատվության տրամադրումը և հրատապ ուղղորդումը,
- ✓ գործարկել պետական մարմինների և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ առցանց հարթակներ երեխաների ընտանեկան բնության դեպքերի իրազեկման և արձանագրման նպատակով,
- ✓ ներդնել համակարգչային, հեռախոսային հաղորդագրությունների սպասարկման ծրագրեր՝ տեղորոշման գործառույթի պարտադիր նախատեսմամբ,
- ✓ մշակել մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ երեխաների ընտանեկան բնության ռիսկերի և սպառնացող վտանգների որոշման և բացահայտման վերաբերյալ՝ սահմանելով միասնական չափորոշիչներ:

Օգտագործված աղբյուրները

Միջազգային և ներպետական իրավական ակտեր

1. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989թ.),
2. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հռչակագիր (1959թ.),
3. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիա (2011թ.),
4. Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա,
5. ՀՀ սահմանադրություն,
6. ՀՀ ընտանեկան օրենսգիրք,
7. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք,
8. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,
9. ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշում խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
10. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին,
11. ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 13-ի N 543-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին,
12. ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 729-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
13. ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 12-ի N 933-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
14. ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 13-ի N 1161-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին,
15. ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 12-ի N 1319-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու կատարելու մասին,

16. ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշում Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին,
17. Պարետի 2020 թվականի մարտի 24-ի թիվ N 16 որոշում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ,
18. Պարետի 2020 թվականի մարտի 24-ի թիվ N 15 որոշում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ,
19. ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
20. ՀՀ Կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 27-ի N 1833-Ն որոշում Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ կատարելու մասին,
21. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 158-Ն համատեղ հրաման Հայաստանի Հանրապետության մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի հուլիսի 14-ի N 07-Ն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի հուլիսի 13-ի N 66-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին,
22. ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019 թվականի թիվ 15-Լ հրաման ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին,
23. ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019 թվականի թիվ 14-Լ հրաման անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին:

Լրացուցիչ նյութեր

24. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդում,
25. Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխաների վրա Հայաստանում, Երևան 2020,
26. Արագ գնահատում, covid-19 պանդեմիայի ժամանակ պետության արձագանքն ընտանեկան բռնությանը, առանցքային դիտարկումներ, արդյունքներ և առաջարկներ, Աննա Հովհաննիսյան, Երևան, 2020:
27. Կարանտինի պայմաններում Հայաստանում ավելացել են ընտանեկան բռնության դեպքերը, 2020թ., <https://www.azatutyun.am/a/30563169.html>,
28. Declaration of the Committee of the Parties to the Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence (Istanbul Convention) on the

- implementation of the Convention during the COVID-19 pandemic, Strasbourg, 20 April 2020, <https://rm.coe.int/declaration-committee-of-the-parties-to-ic-covid-/16809e33c6>,
29. Health Organization Declares COVID-19 a “Pandemic”. Here's What That Means, <https://time.com/5791661/who-coronavirus-pandemic-declaration>,
30. Violence against children. No violence against children is justifiable. All violence against children is preventable. <https://www.unicef.org/protection/violence-against-children>,
31. Children at increased risk of harm online during global COVID-19 pandemic, Unicef, 14 April, 2020, <https://www.unicef.org/press-releases/children-increased-risk-harm-online-during-global-covid-19-pandemic>,
32. Quick and robust' garda response to domestic violence reports promised, 1 April, 2020, <https://www.rte.ie/news/ireland/2020/0401/1127724-gardai-domestic-violence-cases/>,
33. France responds to domestic abuse rise, 31 March 2020, <https://www.odt.co.nz/news/world/france-responds-domestic-abuse-rise>,
34. Europe braces for domestic abuse 'perfect storm' amid coronavirus lockdown, 26 March 2020, <https://news.trust.org/item/20200326160316-710uf>,
35. Protecting Children from Violence in the Time of COVID-19, Disruptions in prevention and response services,
36. Unicef, 2020, file:///C:/Users/User/Downloads/Protecting-children-from-violence-in-time-of-COVID-English_2020.pdf,
37. Telephone calls to domestic violence hotlines increased by 50%, Coalition to stop violence against women, https://coalitionagainstviolence.org/en/telephone-calls-to-domestic-violence-hotlines-increased-by-50/?fbclid=IwAR2SE8tawQENB-t2zQ6_WskRWrK6ptZqoM1B_axdZMreR1EkN0jFHEwDsD4:

Վեբ կայքեր

- <https://www.arlis.am/>
- <https://www.irtek.am/views2/home.aspx?lang=hy-am>
- <https://www.police.am>
- <https://www.ombuds.am/>
- <https://www.gov.am/>
- <https://www.mlsa.am/>
- <https://rm.coe.int/168046246d>
- <https://coalitionagainstviolence.org/en/>
- <http://www.womensupportcenter.org/am/>